

Հաստատված է

Քաղաքացիական իրավունքի և
քաղաքացիական դատավարության ամբիոնի՝
31.08.2020թ. նիստում (արձ. թիվ 1)

Ամբիոնի պետ _____

Գ. Իսրայելյան

ՀՀ ՈՍՏԻԿԱՆՈՒԹՅԱՆ ԿՐԹԱՀԱՄԱԼԻՐ

ԱՌԱՐԿԱՅԱԿԱՆ ՆԿԱՐԱԳԻՐ

ԱՌԱՐԿԱՅԻ ԱՆՎԱՆՈՒՄ	ՀՀ քաղաքացիական իրավունք – 1
ԱՌԱՐԿԱՅԻ ԴԱՍԻՉ	
ՖԱԿՈՒԼՏԵՏ	Իրավագիտություն, առկա անվճար ուսուցում
ՄԱՍՆԱԳԻՏՈՒԹՅՈՒՆ	Իրավագիտություն
ԱՍԲԻՈՆ	Քաղաքացիական իրավունքի և քաղաքացիական դատավարության ամբիոն
ՀԵՂԻՆԱԿ/ՆԵՐ	Գ. Իսրայելյան E-mail: g_i_1979@mail.ru (+374) 98480948
ՈՒՍ.ՏԱՐԻ/ԿԻՍԱՍՅԱԿ	2-րդ կուրս, 1-ին կիսամյակ

ԿՐԹԱԿԱՆ ԱՍՏԻՃԱՆ	ԲԱԿԱԼԱՎՐ
ԴԱՍԱԺԱՄԵՐԻ ԲԱՇԽՈՒՄ	<p>«Քաղաքացիական իրավունք 1» դասընթացի ընդհանուր ծավալը կազմում է 48 ժամ, որից 32 ժամ դասախոսություն, 12 ժամ սեմինար պարապմունք, 4 ժամ գործնական պարապմունք:</p> <p>Լսարանային դասերը կայանում են շաբաթը երկու անգամ՝ 80 րոպե տևողությամբ: Դասընթացն ավարտվում է կիսամյակի վերջում ստուգարք հանձնելով:</p>
ՆԱԽԱՊԱՅՄԱՆ	<p>Դասընթացը կառուցվում է «Պետության և իրավունքի տեսություն», «ՀՀ սահմանադրական իրավունք», «ՀՀ քաղաքացիական իրավունք» դասընթացների իմացության վրա:</p>
ՀԱՄԱՌՈՏ ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ	<p>Դասընթացի շրջանակներում ուսումնասիրվում են քաղաքացիական իրավունքի հասկացությունը, առարկան, մեթոդաբանությունը, աղբյուրները, սուբյեկտները, օբյեկտները, գործարքները, ներկայացուցչությունը, ժամկետները:</p>
ՆՊԱՏԱԿ/ԽՆԴԻՐՆԵՐ	<p>Դասընթացի նպատակն է սովորողներին տալ համապարփակ գիտելիքներ քաղաքացիական իրավունքի, դրա կարգավորման առարկայի ու մեթոդների, սուբյեկտների, օբյեկտների, գործարքների, ներկայացուցչության և ժամկետների ինստիտուտների վերաբերյալ:</p> <p>Դասընթացի խնդիրներն են՝</p> <ul style="list-style-type: none"> • ներկայացնել քաղաքացիական իրավունքի՝ որպես իրավունքի ճյուղի հասկացությունը, էությունը և բովանդակությունը, • մատնանշել իրավունքի համակարգում քաղաքացիական իրավունքի դերի և նշանակության մասին • ներկայացնել քաղաքացիական իրավահարաբերության հասկացությունը, բովանդակությունը, տեսակները, • ներկայացնել քաղաքացիական իրավունքի սուբյեկտների տեսակները, նրանց իրավասուբյեկտությունը, • ներկայացնել քաղաքացիական իրավունքի օբյեկտները, նրանց դասակարգումը • ներկայացնել գործարքների հասկացության, դրանց տեսակներն ու ձևը, վավերության պայմանները, • ներկայացնել ներկայացուցչության հասկացության և տեսակները, • ներկայացնել ժամկետների հասկացության և տեսակները, հայցային վաղեմությունը

<p>ԿՐԹԱԿԱՆ ԵԼՔԱՅԻՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐ</p> <p><i>Մասնագիտական գիտելիք և իմացություն</i></p> <p><i>Ընդհանրական (փոխանցելի) կարողություններ</i></p>	<ol style="list-style-type: none"> 1. ՀՀ քաղաքացիական իրավունքի հասկացությունը, էությունը, սկզբունքները, աղբյուրները և նորմերը, գործառույթները և համակարգը, 2. ՀՀ քաղաքացիական իրավունքի սուբյեկտները, օբյեկտները, գործարքները, ներկայացուցչությունը, ժամկետները <ol style="list-style-type: none"> 1. Ճիշտ մեկնաբանել քաղաքացիական իրավունքի վերը թվարկված ինստիտուտների նորմերը, 2. կիրառել քաղաքացիաիրավական ոլորտի նորմատիվ իրավական ակտերը, 3. իրավաբանական ճիշտ գնահատական տալ փաստերին և արարքներին, 4. քաղաքացիաիրավական ոլորտում տալ որակյալ իրավաբանական եզրակացություններ և խորհրդատվություն:
--	--

<p>ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ</p>	
<p>Հիմնական</p>	<ol style="list-style-type: none"> 1. Ամբիոնի կողմից մշակված դասախոսություններ 2. Բարսեղյան Ս.Կ. – ՀՀ քաղաքացիական իրավունք, Մաս առաջին, 3-րդ հրատարակչություն, Երևան, 2006թ. 3. Ավետիսյան Վ.Դ., Մեղրյան Ս.Գ. – Քաղաքացիական իրավունք / գործնական պարապմունքների ձեռնարկ/ , Մաս առաջին, ԵՊՀ հրատարակչություն, Երևան-2006թ. 4. Հայկական ՍՍՀ քաղաքացիական իրավունք, հատոր 1, Ս. Հ. Հովհաննիսյանի խմբ., Եր., ԵՊՀ հրատ., 1978թ. 5. Պետրոսյան Ռ. Գ, Հայաստանի քաղաքացիական դատավարություն, Եր. , 2003 6. Гражданское право / Под ред. А И. Калпина, А И. Масляева. — М.: Проспект, 2011 7. Гражданское право / под общ. ред. С.С. Алексеева. – М. : Норма, 2006 8. Актуальные проблемы гражданского права: сборник ст. - М. Вып.4. - 2002. 9. Комментарий к Гражданскому Кодексу Российской Федерации: части

		<p>первой. под ред. Н. Д. Егорова и А.П. Сергеева, М. , 2005</p> <p>10. Брагинский М. И., Витрянский В.В. Договорное право, Книга первая, общие положения, М. , 2000</p>
Լրացուցիչ		<ol style="list-style-type: none"> 1. Բարսեղյան Տ. Շ. , Մտավոր սեփականության իրավունք, Եր. 2002թ. 2. Толстой Ю. К. Принципы гражданского права: Правоведение, М. 1992 3. Халфина Р. О. Общее учение о правоотношении М. , 1974 4. Грибанов В. П. Юридические лица , М. 1961 5. Братусь С. Н. Субъекты гражданского права, М. 1950 6. Грибанов В. П. Сроки в гражданском праве М. , 1954

ԳՆԱՀԱՏՄԱՆ ԲԱՂԱԴՐԻՉՆԵՐ ԵՎ ԿՇԻՌ	Ստուգարք (ստուգված, չստուգված)
ԳՆԱՀԱՏՄԱՆ ՉԱՓԱՆԻՇՆԵՐ / ՄԵԽԱՆԻԶՄՆԵՐ	Սովորողը դասընթացից կարող է հանդես բերել մինչև 100% (ստուգված) առաջադիմություն:
ԱՅԼ ՏԵՂԵԿՈՒԹՅՈՒՆՆԵՐ	
Ներկայություն	<p>Դասապլանի որևէ փոփոխություն նախօրոք կտեղեկացվի սովորողին:</p> <p>Սովորողի դասերին ներկայությունը բխում է նրա իսկ շահերից, քանի որ ներկայությունը ենթադրում է ունկրնդրում, մասնակցություն քննարկումներին, չհասկացված կամ վատ հասկացված խնդիրների պարզաբանում, ինքնուրույն աշխատանքների հանձնում: Սովորողն այս դեպքում հնարավորություն է ունենում լսել ոչ միայն ծրագրային նյութը, այլև մասնակցել քննարկումներին, բանավեճերին, անել ինքնուրույն դատողություններ և հայտնել սեփական տեսակետը:</p>
Գրավոր աշխատանքների ներկայացվող պահանջներ	Գրավոր աշխատանքների ժամանակ արգելվում է ծածկագրերից օգտվելը: Ծածկագրի հայտնաբերման դեպքում աշխատանքը գնահատվում է զրո միավոր:
Ինքնուրույն և գործնական աշխատանքներ	<p>Ինքնուրույն և գործնական աշխատանքները անհրաժեշտ է կատարել առանց կողմնակի միջամտության և հանձնել դրանք նշված ժամանակահատվածում:</p> <p>Ինքնուրույն աշխատանքում արգելվում է գրագողությունը: Այլոց մտքերը օգտագործելու դեպքում սովորողը պարտավոր է նշել աղբյուրը ըստ ընդունված ակադեմիական ձևաչափի:</p>

ԱՌԱՐԿԱՅԻ ԹԵՄԱՏԻԿ ՏՐՈՂՈՒՄ

Թեմա 1	
Քաղաքացիական իրավունքը՝ որպես իրավունքի ճյուղ	
(4 ժամ դասախոսություն, 2 ժամ սեմինար պարապմունք)	
Թեմայի հարցերը	Դասավանդման և գնահատման մեթոդաբանություն
<ol style="list-style-type: none"> 1. Քաղաքացիական իրավունքի հասկացությունը 2. Քաղաքացիական իրավունքի աղբյուրները 3. Քաղաքացիական իրավունքի սահմանազատումը իրավունքի այլ ճյուղերից 3. Քաղաքացիական իրավունքի սկզբունքները 4. Քաղաքացիական իրավունքի համակարգը 5. Քաղաքացիական իրավունքի գիտությունը 	<p>1-6-րդ հարցերով անցկացվում է ինտերակտիվ դասախոսություն:</p> <p>1-6-րդ հարցերով սեմինար պարապմունքի ընթացքում անցկացվում է բանավեճային ստուգազրույց, քննարկվում են թեմայի խնդրահարույց հարցերը, ստուգվում են գիտելիքներն անհատական և խմբային հարցման, խնդիրների և թեստային առաջադրանքների միջոցով:</p>

Թեմա 2	
Քաղաքացիական իրավահարաբերություններ	
(2 ժամ դասախոսություն)	
Թեմայի հարցեր	Դասավանդման և գնահատման մեթոդաբանություն
<ol style="list-style-type: none"> 1. Քաղաքացիական իրավահարաբերության հասկացությունը և տարրերը 2. Քաղաքացիական իրավահարաբերության բովանդակությունը 3. Քաղաքացիական իրավահարաբերության դասակարգումը 	<p>1-3-րդ հարցերով անցկացվում է ինտերակտիվ դասախոսություն:</p>

Թեմա 3

Ֆիզիկական անձինք որպես քաղաքացիական իրավունքի սուբյեկտ

(4 ժամ դասախոսություն, 2 ժամ սեմինար պարապմունք)

Թեմայի հարցեր	Դասավանդման և գնահատման մեթոդաբանություն
<p>1. Քաղաքացիների իրավասուբյեկտությունը</p> <p>2. Խնամակալություն և հոգաբարձություն, պատրոնաժ</p> <p>3. Քաղաքացու բնակության վայրը, քաղաքացիական կացության ակտեր</p> <p>4. Քաղաքացուն անհայտ բացակայող ճանաչելը և մահացած հայտարարելը</p>	<p>1-4-րդ հարցերով անցկացվում է ինտերակտիվ դասախոսություն:</p> <p>1-4-րդ հարցերով սեմինար պարապմունքի ընթացքում անցկացվում է բանավեճային ստուգազրույց, քննարկվում են թեմայի խնդրահարույց հարցերը, ստուգվում են գիտելիքներն անհատական և խմբային հարցման, խնդիրների և թեստային առաջադրանքների միջոցով:</p>

Թեմա 4

Իրավաբանական անձինք որպես քաղաքացիական իրավունքի սուբյեկտ

(8 ժամ դասախոսություն, 2 ժամ սեմինար պարապմունք, 2 ժամ գործնական պարապմունք)

Թեմայի հարցեր	Դասավանդման և գնահատման մեթոդաբանություն
<p>1. Իրավաբանական անձի հասկացությունը և հատկանիշները</p> <p>2. Իրավաբանական անձի իրավասուբյեկտությունը, իրավաբանական անձի մարմինները, իրավաբանական անձի ծագումն ու դադարումը</p> <p>3. Իրավաբանական անձի անվանումը, ապրանքանիշը, արտադրական դրոշմանիշը, իրավաբանական անձանց տեսակները</p> <p>4. Տնտեսական ընկերությունների և ընկերակցությունների հասկացությունը և տեսակները</p> <p>5. Ոչ առևտրային կազմակերպություններ, ներկայացուցչույններ և մասնաճյուղեր</p>	<p>1-5-րդ հարցերով անցկացվում է ինտերակտիվ դասախոսություն:</p> <p>1-5-րդ հարցերով սեմինար պարապմունքի ընթացքում անցկացվում է բանավեճային ստուգազրույց, քննարկվում են թեմայի խնդրահարույց հարցերը, ստուգվում են գիտելիքներն անհատական և խմբային հարցման, խնդիրների և թեստային առաջադրանքների միջոցով:</p> <p>1-5-րդ հարցերով իրականացվում է գործնական աշխատանք. սովորողները պատրաստում են զեկույցներ՝ նախապես տրված թեմաներով, լուծում են գործնական խնդիրներ և վարժություններ:</p>

Թեմա 5

Հայաստանի Հանրապետությունը և վարչատարածքային միավորումները որպես քաղաքացիական իրավունքի սուբյեկտ

(2 ժամ դասախոսություն)

Թեմայի հարցեր	Դասավանդման և գնահատման մեթոդաբանություն
----------------------	---

<ol style="list-style-type: none"> 1. Հայաստանի Հանրապետության, մարզերի և համայնքների իրավասությունների առանձնահատկությունները 2. Պետության մասնակցության ձևերը քաղաքացիական իրավահարաբերություններին 	<p>1-6-րդ հարցերով անցկացվում է ինտերակտիվ դասախոսություն:</p>
---	--

<p>Թեմա 6</p> <p>Քաղաքացիական իրավունքի օբյեկտները</p> <p>(4 ժամ դասախոսություն, 2 ժամ սեմինար պարապմունք)</p>	
<p>Թեմայի հարցեր</p>	<p>Դասավանդման և գնահատման մեթոդաբանություն</p>
<ol style="list-style-type: none"> 1. Իրերի հասկացությունը և դասակարգումը 2. Դրամը և արժեթղթերը 3. Մտավոր գործունեության արդյունքները որպես քաղաքացիական իրավունքների օբյեկտ 4. Տեղեկատվությունը որպես քաղաքացիական իրավունքի օբյեկտ 5. Անձնական ոչ գույքային բարիքները, աշխատանքները և ծառայությունները որպես քաղաքացիական իրավունքների օբյեկտ 	<p>1-5-րդ հարցերով անցկացվում է ինտերակտիվ դասախոսություն:</p> <p>1-5-րդ հարցերով սեմինար պարապմունքի ընթացքում անցկացվում է բանավեճային ստուգազրույց, քննարկվում են թեմայի խնդրահարույց հարցերը, ստուգվում են գիտելիքներն անհատական և խմբային հարցման, խնդիրների և թեստային առաջադրանքների միջոցով:</p>

<p>Թեմա 7</p> <p>Գործարքներ</p> <p>(4 ժամ դասախոսություն, 2 ժամ սեմինար պարապմունք)</p>	
<p>Թեմայի հարցեր</p>	<p>Դասավանդման և գնահատման մեթոդաբանություն</p>
<ol style="list-style-type: none"> 1. Գործարքի հասկացությունը, առանձնահատկությունները, կամքը և կամահայտնությունը գործարքում 2. Գործարքների տեսակները և ձևը 3. Գործարքի վավերության պայմանները, անվավեր գործարքներ 	<p>1-3-րդ հարցերով անցկացվում է ինտերակտիվ դասախոսություն:</p> <p>1-3-րդ հարցերով սեմինար պարապմունքի ընթացքում անցկացվում է բանավեճային ստուգազրույց, քննարկվում են թեմայի խնդրահարույց հարցերը, ստուգվում են գիտելիքներն անհատական և խմբային հարցման, խնդիրների և թեստային առաջադրանքների միջոցով:</p>

Թեմա 8

Ներկայացուցչությունը և Ժամկետները քաղաքացիական իրավունքում

(4 ժամ դասախոսություն, 2 ժամ սեմինար պարապմունք, 2 ժամ գործնական պարապմունք)

Թեմայի հարցեր	Դասավանդման և գնահատման մեթոդաբանություն
<ol style="list-style-type: none"> 1. Ներկայացուցչության հասկացությունը և տեսակները 2. Լիազորագիր 3. Ժամկետների հասկացությունը, տեսակները և հաշվարկման կարգը 4. Հայցային վաղեմության հասկացությունը և նշանակությունը 5. Հայցային վաղեմության կասեցումը, ընդհատումը և վերականգնումը 6. Պահանջներ, որոնց վրա հայցային վաղեմություն չի տարածվում 	<p>1-6-րդ հարցերով անցկացվում է ինտերակտիվ դասախոսություն:</p> <p>1-6-րդ հարցերով սեմինար պարապմունքի ընթացքում անցկացվում է բանավեճային ստուգազրույց, քննարկվում են թեմայի խնդրահարույց հարցերը, ստուգվում են գիտելիքներն անհատական և խմբային հարցման, խնդիրների և թեստային առաջադրանքների միջոցով:</p> <p>1-6-րդ հարցերով գործնական պարապմունքի ընթացքում սովորողները լուծում են գործնական խնդիրներ և վարժություններ:</p>

Հարցաշար

«ՀՀ քաղաքացիական իրավունք 1» առարկայի ստուգարքի

1. Քաղաքացիական իրավունքի հասկացությունը
2. Քաղաքացիական իրավունքի սահմանազատումը իրավունքի այլ ճյուղերից:
3. Քաղաքացիական իրավունքի սկզբունքները :
4. Քաղաքացիական իրավունքի համակարգը:
5. Քաղաքացիական իրավունքը որպես գիտություն:
6. Իրավունքի աղբյուրի հասկացությունը և տեսակները: Քաղաքացիական օրենսդրություն:
7. Քաղաքացիական օրենսդրության կիրարկումը:
8. Քաղաքացիական իրավահարաբերության հասկացությունը և տարրերը:
9. Քաղաքացիական իրավահարաբերությունների դասակարգումը:
10. Քաղաքացիական իրավահարաբերությունների ծագման, փոփոփման և դադարման հիմքերը:
11. Քաղաքացիների իրավասուբյեկտությունը:
12. Խնամակալություն և հոգաբարձություն, Պատրոնաժ:
13. Քաղաքացու բնակության վայրը , քաղաքացիական կացության ակտեր:
14. Քաղաքացուն անհայտ բացակայող ճանաչելը և մահացած հայտարարելը:
15. Իրավաբանական անձի հասկացությունը և հատկանիշները:
16. Իրավաբանական անձի իրավասուբյեկտությունը, իրավաբանական անձի մարմինները:
17. Իրավաբանական անձի ծագումն ու դադարումը:
18. Իրավաբանական անձի անվանումը, ապրանքանիշը, արտադրական դրոշմանիշը: Իրավաբանական անձանց տեսակները:
19. Տնտեսական ընկերությունների հասկացությունը և տեսակները:
20. Տնտեսական ընկերակցությունների հասկացությունը և տեսակները:
21. Ոչ առևտրային կազմակերպությունների հասկացությունը և տեսակները:
22. Ներկայացուցչություններ և մասնաճյուղեր:
23. Հայաստանի Հանրապետության, մարզերի և համայնքների իրավասուբյեկտության առանձնահատկությունները:
24. Պետության մասնակցության ձևերը քաղաքացիական իրավահարաբերություններին:
25. Իրերի հասկացությունը և դասակարգումը:
26. Դրամը և արժեթղթերը:
27. Մտավոր գործունեության արդյունքները որպես քաղաքացիական իրավունքների օբյեկտ:
28. Տեղեկատվությունը որպես քաղաքացիական իրավունքների օբյեկտ:
29. Անձնական ոչ գույքային բարիքները որպես քաղաքացիական իրավունքների օբյեկտ:
30. Աշխատանքները և ծառայությունները որպես քաղաքացիական իրավունքների օբյեկտ:
31. Գործարքի հասկացությունը, գործարքի առանձնահատկությունները, կամքը և կամահայտնությունը գործարքում:
32. Գործարքների տեսակները:
33. Գործարքների կնքման ձևերը:
34. Գործարքի վավերության պայմանները, անվավեր գործարքներ:
35. Ներկայացուցչության հասկացությունը և տեսակները:
36. Լիազորագիր, հասկացությունը և տեսակները:
37. Ժամկետների հասկացությունը և տեսակները:
38. Ժամկետների հաշվարկման կարգը:
39. Հայցային վաղեմության հասկացությունը և նշանակությունը:
40. Հայցային վաղեմության կասեցումը, ընդհատումը, վերականգնումը:
41. Պահանջներ, որոնց վրա հայցային վաղեմություն չի տարածվում: